ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ

Բաժնի պետի տեղակալը՝

- Համակարգել Արդարադատության նախարարի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանների համաձայն, կատարողական վարույթներով ընթացիկ գործունեության տեսչական ստուգումները.
- Համակարգել և իրականացնել կատարողական գործողությունների ընթացքում տարածքային բաժինների կողմից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ներկայացված զեկուցագրերի կամ Բաժին ներկայացված գրությունների հիմքով որոշակի կատարողական վարույթների ուսումնասիրությունը և անհրաժեշտության դեպքում որոշումների և ծանուցումների տեղադրումը հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (azdarar.am).
- Իրականացնել Ծառայության ընթացիկ գործունեությանը վերաբերող շրջաբերականների, անհրաժեշտության դեպքում նաև ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հանձնարարականների նախագծերի մշակումը.
- Համակարգել Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից բռնագանձված գումարների, կատարողական վարույթների կարճումների և ավարտների վերաբերյալ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կազմումը.
- Իրականացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից ստացված գրությունների պատասխան-գրությունների նախագծերի պատրաստումը.
- Համակարգել սահմանված կարգի համաձայն եռամսյակային հաշվետվությունների կազմումը և ներկայացումը Արդարադատության և Ֆինանսների նախարարություններ, Պետական եկամուտների կոմիտե և Վիճակագրական կոմիտե.
- Իրականացնել քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, ինչպես նաև պետական մարմիններից ստացված դիմում-բողոքների և այլ գրությունների ուսումնասիրությունը և պատասխան գրությունների պատրաստումը.
- Իրականացնել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով ավարտման ենթակա կատարողական վարույթների հիմնավորվածության ուսումնասիրությունը.
- Ապահովել միատեսակ իրավակիրառ պրակտիկայի մեթոդաբանությունը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան.
- Որպես փորձաշրջանի համակարգող, Հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձին օգնել ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման հարցում, ծանոթացնել այդ գործառույթների արդյունավետ կատարման եղանակներին, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ընթացակարգերին.
- Կատարել Բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ:

2.Պաշտոնին ներկայացվող պահանջները

Հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի հուլիսի 30-ի N 461-Ն որոշմամբ: